ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԾՈՒՅԹՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

(ըստ Եզնիկ Կողբացու լեզվանյութի)

Թ. Ս. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Անցյալ դերբայը գործածության քանակով և հաճախականությամբ զիջում է միայն անորոշին, իսկ շարահյուսական կիրառությամբ գերազանցում է մյուս բոլոր դերբայներին։ Եզնիկը մոտավորապես հինգ հարյուր բայ է գործածել, որից երկու հարյուր յոթանասունը անցյալ դերբայ ունի։

Անցյալ դերբայը դասական գրաբարում կիրառվում է դիմավոր բայի դերով. օրինակ՝ «Ի նոյն խարափ անկեալ և աղանդոցն, զոր թշնամին իբրև զորոմն ի մէջ ցորենոյ սերմանեաց»[1]։ «Լուսաւորութեան արևուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն, և ընդ յստակութիւն ջրոյն օդով թափանցանաց անցեալ՝ հուր ծնուցանէ» (220)։ «Բայց մարդոյ առեալ զանձնիշխանութիւն, ում կամի՝ ծառայանայ. ոչ ի հարկէ բնութեան բռնադատեալ, և ոչ ի զորութենէն՝ ...կասեալ» (41)։ Ինչպես օրինակներից էլ երևում է, անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալի կողմնակի ենթական մեծ մասամբ դրվում է սեռական հոլովով։ Անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալը կարող է հանդես գալ գլխավոր նախադասության կազմում, ինչպես՝ «Եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան ոգւովն, մինչև ի պատգամաց Հոգւոյն սրբոյ քաղ հանել» (253)։ «Եւ տեսեալ, ասեն, Աստուծոյն բարւոյն և օտարի, որ նստէր յերրորդ երկինս, թէ այնչափ ազգք կորեան և տանջեցան» (247)։ «Եւ հայեցեալ ի միտս՝ թէ զամենայն է մտօքն նկատել մարթեն» (227)։

Անցյալ դերբայը լինում է նաև երկրորդական նախադասության ստորոգյալ։ «Քանզի եթէ յառաջագոյն չէր գուշակեալ[2] Աստուծոյ մարդոյն չուտել ի կերակրոյ ծառոյն, և նորա յանգէտս կերեալ, չլինէր նմա պատիժ մահ» (49)։ Ըստ Չալըխյանի, անցյալ դերբայով երկրորդական նախադասություն գործածվում է այն ժամանակ, երբ նախադասությունը սկսվում է յորժամ և իբրև մակբայներով։ Յորժամ մակբայի համար Եզնիկից մի օրինակ է բերված. «Յորժամ հարաւ շնչեալ, ասէք, թէ խորշակ լինի»[3]։ Բայց Եզնիկը գործածում է ոչ թե շնչեալ, այլ շնչիցէ ձևով (186), ուր սխալ է նաև նախադասության շարունակությունը. բնագրում՝ «թէ խորշակ մեծ լինելոց է» (186)։

Եզնիկը յորժամ մակբայով ավելի քան հարյուր քսան ժամանակի պարագա երկրորդական նախադասություն է գործածել, և չկա մի օրինակ անգամ, որում ստորոգյալը լինի անցյալ դերբայ. բոլոր նախադասությունների ստորոգյալները դիմավոր բայով են արտահայտված։

Իբրև մակբայով ավելի քիչ նախադասություններ կան (մոտ քսան օրինակ). սակայն դարձյալ անցյալ դերբայով չկա և ոչ մի նախադասություն։

Անցյալ դերբայով երկրորդական նախադասությունը կարող է լինել ենթակա երկրորդական. «Զի բամբասեալ ի շարութենէ սատանայ, այն ամե-

---

1 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826, էջ 111 (այսուհետև «Եղծ աղանդոցից» արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից)։

2 Այս ստորոգյալն արտահայտված է անցյալ դերբայով կազմված վերլուծական ժամանակով։

3 Վ. Չալըխեան, Ա. Այտընեան, Քերականութիւն հայկազեանց լեզուի, Վենետիկ, 1885, էջ 430։

նեցուն յայտնի է» (109)։ Անցյալ դերբայը կարող է լինել բարդ համադասական նախադասության համազոր նախադասություններից մեկի կամ երկուսի ստորոգյալը. «Զի՞նչ առեալ կամ զի՞նչ կցկցեալ կամ ո՞յր բանիւ խօսին» (250)։ «Ընդ նոյն արահետս վրիպեալք ի ճշմարտութենէն՝ զնոյն բաջաղանս այլովք պատմութեամբք կարկատեցին» (110)։ «Եւ տեսեալ զնա Զրուանայ, գիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա է» (114)։

Այստեղ անցյալ դերբայի անկախ կիրառության և դիմավոր բայից կախված լինելու սահմանները դժվար է որոշել։ Վերոհիշյալ օրինակներում դերբայները ներգործական սեռի են։ Ըստ Այտընյանի, եթե ենթական ուղղականով է, այն ոչ թե անցյալ դերբայի ենթական է, այլ տվյալ նախադասության դիմավոր ստորոգյալի ենթական։ Այտընյանը բերում է հետևյալ օրինակները. «Նո՛ա առեալ տանէին զնա», «Դու յարուցեալ գնասցես», «Նո՛ա գանի հաւրեալ երկնչէին»[4]։ Այս դեպքում անցյալ դերբայները ի՞նչ պետք է համարել՝ անկախ ստորոգյալնե՞ր, թե՝ դիմավոր բայի լրացումներ։

Այտընյանը հիշյալ օրինակների համար ասում է, թե այդ երկու բայերը զուգաբայեր են, այսինքն՝ առնում տանում էին, վեր կկենաս կգնաս, զարհուրում երկնչում էին մեկ բառի արժեք ունեն։ Այսպիսի կարճ նախադասությունների համար նա հանձնարարում է անցյալ դերբայը գործիականով չթարգմանել, այլ արտահայտել հարակատարով կամ վաղակատարով և որևէ դիմավոր ձևով. օրինակ՝ նստեալ բարբառին (նստած խոսում են կամ նստել խոսում են /նստել են, խոսում են). յարուցեալ գնաց (ելավ-գնաց)։ Մտեալ ի նաւ անց յայն կոյս. մտավ նավը, անցավ այն կողմը[5]։

Իսկ Զալբխյանը գտնում է, թե երբ տեսեալ, եկեալ նշանակեն տեսնելով, գալով, սեռականով ենթակա կառնեն[6]. իսկ թե երբ են տեսեալ, եկեալ նշանակում տեսնելով, գալով, չի բացատրված։ Մեզ թվում է, որ երբ անցյալ դերբայի ենթական սեռականով է արտահայտված, այդ ժամանակ է անցյալ դերբայը անկախ ստորոգյալ դառնում, իսկ երբ ենթական ուղղականով է արտահայտվում, և ստորոգյալը՝ դիմավոր բայով, այդ ժամանակ էլ անցյալ դերբայը լրացական դեր է կատարում. օրինակ՝ «Որով ցուցանի՝ թէ մարմինք նորոգեալք յարութեամբն, ազատացեալ յամենայն կարեաց՝ յառնեն» (296), «Լուսինն, ասեն, քան զարեգակն երեսուն օր անցեալ ընդ ամենայն երկինս՝ հասանէ ի նոյն տեղի» (199), այսինքն՝ անցնելով։ «Եւ Հոմերոս զրաբանեալ, զնորին հետ երթեալ, պաճուճեալ բանիւք զնոյնս ճամարտակէ» (240), այսինքն՝ հետեելով։

Իսկ երբ ենթական սեռականով է դրված, նշանակում է՝ գրողի ուշադրությունը սևեռված է անցյալ դերբայի և ոչ թե դիմավոր բայի վրա։ Իհարկե, այստեղ հնարավոր է նաև խաչաձևում։ Այստեղ դարձյալ հենվենք գրաբարի քերականության մեծ հեղինակության՝ Այտընյանի մտքի վրա, ըստ որի՝ անցյալ դերբայով և դիմավոր բայով նախադասության մեջ անցյալ դերբայի դիրքը հնարավոր չէ հստակորեն զանազանել, այսինքն՝ անցյալ դերբայը անկա՞խ կիրառություն ունի, թե՝ հանդես է գալիս լրացական դերով։

Այտընյանը գտնում է, որ կարճ նախադասությունների մեջ անցյալ դերբայ և դիմավոր բայ ունեցող նախադասությունների անցյալ դերբայները դիմավորով պետք է արտահայտել։ Բոլոր դեպքերում ելակետ պետք է ընդունել երկու, իրարից տարբեր ենթականները՝ ուղղականով և սեռականով։ Սեռականով ենթական անցյալ դերբային անկախ դիրք է տալիս։ Իսկ եթե նման նախադասությունների ենթական ուղղական է, ապա ուշադրության կենտրոնում դիմավոր բայն է և ոչ թե անցյալ դերբայը։ Սակայն կարևոր է

---

4 Նույն տեղում, էջ 213։

5 Նույն տեղում, էջ 2, 3։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, էջ 214։

նաև հետևյալ հանգամանքը։ Եթե անցյալ դերբայը կրավորական սեռով է արտահայտված, սրա ենթական երբեք սեռական հոլովով չի կարող գործածվել։ Իսկ չեզոք սեռի անցյալ դերբայը ավելի շատ ուղղականով ենթակա է վերցնում, քան թե սեռականով։

Այժմ օրինակներ բերենք կողմնակի սեռականով ենթակա ունեցող այնպիսի անցյալ դերբայների, որոնց հետ նախադասության մյուս բաղադրիչն ունի դիմավոր բայ-ստորոգյալ. «Եւ եկեալ Որդւոյ առ Աբրահամ երկուք հրեշտակք, արժանի առնէր ճաշ ի վրանի նորա ուտելոյ։ Եւ ի խօսս մատուցեալ ի լերինն ընդ Աբրահամու, զերկուս պատանիս իւր՝ զհրեշտակս մարդակերպեալս՝ ի Սոդոմ առ գեղեցիկ ասպնջականն առ Ղովտ արձակէր։ Եւ հրացուցեալ և շայլայլեալ զհրեշտակն ի մոռենուջն, ի մարդկեղէն բարբառ ածեալ, տայր ընդ նախընծայեցելոյ առն Աստուծոյ ընդ Մովսեսի խօսեալ» (94)։ «Եւ ուրումն ի մտի եդեալ գողանալ զայլոյ ամուսնութիւն, և ելեալ անօրէնութեամբ յօտար մահիճս, չտայ լինել հայր որդւոց այնմ՝ որ օրինօքն ամուսնացեալ իցէ» (20)։

Նման կառույցներում անցյալ դերբայի ձևերը ավելի հաճախ դիմավոր բայի դեր են կատարում։

Եթե դիմավոր բայը անցյալ դերբայից առաջ է դրվում, ենթական ուղղականով է հանդես գալիս. «Եւ այլք զգերեզմանս կրկտեն, և զթաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արևու ցուցանեն» (19)։ Այս ապացույց է այն բանի, որ շարադասությունը տվյալ դեպքում ունի կարևոր նշանակություն, այսինքն՝ մտքում շուտ առաջացող լեզվական ձևը իշխող է կամ ավելի ճիշտ՝ ստանում է ինքնուրույն արժեք։ Հենց սա նկատի ունենալով՝ անցյալ դերբայի անկախությունը կապում ենք ենթակայի ձևի հետ։ Եթե ենթական սեռականով է գործածված, նշանակում է՝ խոսողը կամ գրողը նախադասության անդեմ և դիմավոր ստորոգյալների միջև կարևորությունը անդեմ ձևին է տվել, այլապես ենթական ուղղականով պետք է լիներ։ Իսկ երբ նման կառույցի մեջ ենթական ուղղական է, նշանակում է՝ խոսողը կամ գրողը անդեմ բայաձևին երկրորդական նշանակություն են տվել, և այն լրացական արժեքով է հանդես եկել, այդ դեպքում կարևորությունը տրված է դիմավոր ձևին, եթե, իհարկե, Այտընյանի մատնանշած պայմանը առկա չէ, այսինքն՝ անդեմ և դիմավոր բայաձևերը զուգաբայեր չեն (ելեալ շոգաւ, գանի հատեալ երկեաւ, անցեալ գնաց, եկաց եմուտ, էառ փախեաւ), որտեղ, ըստ Այտընյանի, երկու ձևերը հավասար դիրքում են։ Այսպիսի բայերը արդի հայերենում հնարավոր չէ դերբայ-դիմավոր բայով արտահայտել՝ ելնելով գնաց, գալով մնաց, զարհուրելով վախեցավ, այլ երկուսն էլ դիմավոր բայով՝ ելավ գնաց, եկավ մտավ, զարհուրեց վախեցավ։

Անցյալ դերբայը լրիվ ինքնուրույն է, երբ միևնույն նախադասության դիմավոր բայի և անցյալ դերբայի ենթակաները տարբեր են. օրինակ՝ «Ուստի ասեն Յունաց իմաստունքն զարարածս արարեալ (Աստուծոյ). և ի նմանէ շարեաց յաշխարհ մտեալ» (235)։ Ասեն ստորոգյալի համար ենթական է իմաստունքն, արարեալ ստորոգյալի համար՝ Աստուծոյ, իսկ մտեալ ստորոգյալի համար՝ շարեաց։ «Նորա յանգէտս կերեալ, չինէր նմա պատիժ մահ» (49)։ Այս կապակցությամբ պետք է ասել հետևյալը։ Չալըխյանը նշում է, որ անցյալ դերբայի մոտ դրվում է ուղղականով ենթակա. օրինակ՝ «հրաման հասեալ ի թագաւորէն, օգնութիւն հասեալ առ ի յԱստուծոյ, մինչև ցայսօր կացի։ Զմանկտին կոտորեցին, ես միայն ապրեալ եկի պատմել քեզ»[8]։ Բանն այն է, որ բերված օրինակների անցյալ դերբայներից երկուսը չեզոք են, վերջինը՝ կրավորակերպ չեզոք, իսկ մենք գիտենք, որ չեզոք սեռի անցյալ դերբայները հակվում են դեպի ուղղականով ենթական։ Իսկ Այտընյանը անում է հետևյալ դիտողությունը։ Շատ անգամ այդպիսի ուղղականով ենթական պատկանում է դիմավոր բային, իսկ անդեմ անցյալ

[8] Նույն տեղում, էջ 214։

դերբայը միջանկյալ նախադասություն է։ Եվ սրա համար Այտընյանը բերում է հետևյալ օրինակները. «Առաքինիք (մտեալ ի փորձութիւնս) զտին իրրև զոսկի։ Աստուած կանխագէտ (գթացեալ իւր արարածն) տարաժամ մահուամբ զերծուցանէ զմարդն ի չարեաց։ Ահա (ես) երթեալ առ որդիսն Իսրայէլի՝ ասիցեմ ցնոսա, Աստուած առաքեալ զիս»[9]։

Անցյալ դերբայը եմ բայի ներկայի հետ կազմում է վաղակատար-հարակատար ներկա. «Եւ յէկկլեսիաստէսն զրեալ է՝ թէ ծագէ արեգակն...» (189)։ «Իշխան աշխարհիս այսորիկ արդեն իսկ դատապարտեալ է» (79)։ «Քանզի չե ես է թանձրացեալ և ամպացեալ օդն» (186)։ «Զոր միոյն թողեալ է, միւսն առնու նովին Հոգւով» (193)։

Անցյալ դերբայը եմ բայի անցյալի հետ կազմում է վաղակատար-հարակատար անցյալ. «Զի ահաւանիկ զայն ամենայն ժողովս բազմաց, մինչ չև ելեալ էր ի խաչ կորզեաց յինքն» (267)։ «Կամ զհիւղեայն զիա՞րդ ընդ միտս նաւեալ էր» (255)։ «Զի միայն զնախանձն՝ զոր ի մտի եղեալ էր դոռալոյ ընդ մարդոյն՝ կատարեսցէ» (109)։

Անցյալ դերբայը հիշյալ ժամանակները կազմելիս կարող է հանդես գալ թե՛ սեռականով և թե՛ ուղղականով ենթակաների հետ։ Այժմ բերենք օրինակներ, ուր անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակաձևը հանդես է գալիս սեռականով ենթակայի հետ. «Զէր քարացուցեալ Աստուծոյ զսիրտն Փարաւոնի» (167)։ «Զոր տնկեալ է արարչին յանդամսն» (176)։ «Զի թէ նորա զայնպիսի արուեստ չէր ցուցեալ, հիւղն ոչ իմանայր» (258)։ «Քանզի եթէ յառաջագոյն չէր գուշակեալ Աստուծոյ» (49)։

Անցյալ դերբայը եմ բայի առաջին ապառնու հետ կազմում է ստորադասական եղանակի վերլուծական ապառնի ժամանակը. օրինակ՝ «եթէ ոք հաւատացեալ միս ոչ ուտիցէ, և բանջար ընդ մսոյ եփեալ իցէ, և ի բանջարոյն ոչ կամիցի ճաշակել, նզովեալ լիցի» (287)։ «Զոր միոյ մարգարէի թողեալ իցէ՝ միւսովն լնու Հոգին սուրբ» (197)։

Այս կիրառությամբ անցյալ դերբայը չի հոլովվում, միայն շատ հազվադեպ կարող է հոգնակիով գործածվել. «Նա թէ և ի չարէ ինչ էին չարք արարեալք, ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտանէր» (65)։

Անցյալ դերբայը հոգնակի կարող է լինել նաև առանց օժանդակ բայի. «Եւ նոքա սրացեալք ի լերինս և յափափայս ճեպեն անկանել փախստականք» (146)։

Գրաբարում եղել է նաև ստորադասականի ապառնի անցյալը։ Ըստ Այտընյանի՝ այս ձևերը առաջացել են գրաբարի անկածության հետագա շրջաններում. իցէի, թէ լինիցէիր, զի ասիցէր, առնուցայր։ Սրանք բերված են հետին շրջանի գրականությունից։ Սրանց հետ Այտընյանը բերում է նաև դասական գրականությունից օրինակներ՝ մեղքը գցելով գրչագիրների վրա. «Ինձ այնպես թուէր՝ եթէ հուր բոց ի գնդէն ելանիցէր։ Զի դու քեզէն իմասցիս, թէ զիա՞ իցէր՝ որով ծածկեալ էր երկիր։ Թէ դնիցէին օրէնքն»[10]։ Այսուհանդերձ, Այտընյանը եմ բայի ստորադասականի անցյալի եզակի երրորդ դեմքի իցի ձևի վրա չի կասկածում։ Մակբայ կամ միջարկություն դիտված այդ ձևը Այտընյանը բայ է համարում։ Եզնիկը իցի ձևը, իբրև անցյալ դերբայի հետ գործածված բաղադրիչ, երկու անգամ է կիրառել։ Ահա դրանք. «Թէ ինքն յանձնէ իմաստութիւն ինչ այնպիսի ոչ ունէր գէթ արարիչն աշխարհի նայեցեալ իցի ուսանել ի նմանէ զարուեստն» (251)։ Նայեցեալ իցի՝ նշանակում է ճայած լիներ։ Իսկ բնագրում կետադրված է. նայեցեալ՝ իցի ուսանել։ «Եթէ վասն ողորմութեան արար՝ զոր արարն, պանեալ իցի զգալուստ որդւոյն իւրոյ մինչև ի վախճան աշխարհի, և ապա առաքեալ» (274), այսինքն՝ պանած լիներ։

---

9 Նույն տեղում։ Փակագծերի մեջ առնված նախադասությունները միջանկյալ են։

10 Նույն տեղում, էջ 380։

Փաստերը ցույց են տալիս, որ ստորադասականի անցյալ ձևը դրաբարում եղել է, բայց դժվար է բացատրել, թե ինչու են պակասել այդ ձևերը, երբ դրանց կարիքը լեզվում զգացվում էր։ Գուցե այն պատճառով, որ անցյալ անկատարը արտահայտում էր ստորադասականի անկատարի, անցյալի նշանակություն։ Այսպես՝ «Լաւ էր լեալ՝ թէ նոյնպիսի կացեալ էր անհեղեղ և անարգասաւոր» (29)։ «Քանզի եթէ յառաջագոյն չէր գուշակեալ Աստուծոյ մարդոյն չուտել ի կերակրոյ ծառոյն, և նորա յանգէտս կերեալ, չլինէր նմա պատիժ մահ» (49)։ Անցյալ դերբայը լինիմ բայի հետ բաղադրվելով՝ հազվադեպ կրավորականի նշանակություն է ստանում։ Ծղնիկը երեք անգամ գործածել է լինիմ բայի երկրորդ ապառնու հետ՝ ապառնու նշանակությամբ. «Եթէ ոք հաւատացեալ միս ոչ ուտիցէ, և բանջար ընդ մսոյ եփեալ իցէ, և ոչ կամիցի ճաշակել, նգովեալ լիցի» (287)՝ նգովվի, թող նգովվի։ «Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի» (115)։ «Ասէ ցմիւս անդամալոյծն՝ թէ թողեալ լիցին քեզ մեղք քո» (80)։

Անցյալ դերբայը բաղադրյալ միադիմի ստորոգյալ է կազմում կայ պակասավոր բայի հետ՝ հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակների նշանակությամբ։ Ընդ որում, Ծղնիկը անցյալ ձևով (կայր) միայն մի օրինակ ունի. «Նա լռեալ կայր և ոչ ինչ մեղանչէր նմա» (267)։ Մյուս օրինակները կամ-ով են. «Կամ երկիր կլանելով, որ ի վերա ոչնչի կայ հաստատեալ» (17)։ «Եթէ զբեկնից ասիցես, կայ հաստատեալ և ոչ շարժի...» (40)։ «Եւ ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք» (105)։ «Զի զայսց երկուց պատուիրանաց կախեալ կան օրէնք և մարգարէք» (277)։

Ինչպես երևում է օրինակներից, տվյալ բաղադրյալ ձևը կազմում են այնպիսի բայեր, որոնք մնայուն հետք թողնելու կարողություն ունեն։ Նաև նկատելի է, որ այդպիսի կազմությունները ավելի շատ չեզոք նշանակությամբ են օժտված։ Անցյալ դերբայը բաղադրյալ ստորոգյալ է կազմում նաև ունիմ բայով, որ դարձյալ հարակատարի նշանակություն է տալիս դերբային, որն ավելի որոշակի է, քան նախորդը։ Միայն ունիմ բայով կազմված բաղադրյալ ձևը ներգործական նշանակություն ունի։ Այս ձևը Ծղնիկը գործածել է միայն երկու անգամ. «(Վիշապք) ոչ զոք ի թագաւորազգաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի» (104)։ «Եւ այսպես ոչ երբէք էր Աստուած դատարկ յարարչութենէ, քանզի միշտ ի մտի նկարեալ ունէր զորս առնելոցն էր» (238)։ Գտանեմ բայի ներգործական և կրավորական ձևերի հետ անցյալ դերբայը բաղադրյալ ստորոգյալ է կազմում, որտեղ ներգործականի դեպքում գտանեմ բայի և անցյալ դերբայի ենթակաները կարող են տարբերվել։ Այս դեպքում այդ երկու բայաձևերի կապը թույլ է։ Անցյալ դերբայը և դրա հետ կապակցված բառերը գտանեմ բայի համար ուղիղ խնդիր են. օրինակ՝ «Թէ ճշմարտիւ ոք քննիցէ զիրսն՝ գտանէ յանհնարին վտանգս եկեալ զհիւղն» (31)։ «Իսկ եթէ ոչ ուրեք գտանեմք ասացեալ նորա ի նորումս՝ թէ զայս ինչ մի ուտիցես» (280)։ Իսկ երբ գտանեմ բայը կրավորական է, ապա բայի և անցյալ դերբայի ենթական նույնն է. այս դեպքում բայը և անցյալ դերբայը մի բաղադրյալ ստորոգյալ են կազմում, որտեղ գտանեմ բայը նշանակում է դուրս է գալիս, հայտնվում է, երևում է, իսկ անցյալ դերբայն ունենում է հարակատարի նշանակություն։ Օրինակ՝ «Գործ բարւոք գործէ Աստուած, թէպէտ և չարն ոչ այնպիսի մտօք մատչի փորձել, այլ համարի յաղթել, և գտանի պարտաւորեալ» (182)՝ դուրս է գալիս պարտված, երևում է պարտված։

Գտանեմ բայը գործածվել է նաև անցյալ կատարյալով և ստորադասական ապառնիով. «Եւ չգտաւ առիւծն յերկինս մտեալ յաստեղատունն» (160)։ «Զի մի՛ իբրև զտկար ոք պարտեալ ինչ գտանիցի՝ առ ի չկարելոյ առնել զայնս» (236)։ Նման դեպքերում ենթական դրվում է սեռական հոլովով. «Զի նորա առաւել գտանի չծանուցեալ զԱստուած» (241)։ Զի բացառվում նաև այն փաստը, որ ենթական դրվի ուղղականով։ Փարպեցին, օրինակ, այս կառույցը կիրառել է մի քանի անգամ, և բոլոր դեպքերում ենթական ուղղականով է դրված. «Յիրաւի պատժեալք մեք յաստուածոցն գտանեմք», «Այր-

ընտիր գնդաւ յաղթեալ գտայ նա»[11]։ Եղիշեի գործածած հինգ օրինակի մեջ էլ ենթական ուղղականով է արտահայտվել։ Ագաթանգեղոսի գործածածները կա՛մ անենթակա են, կա՛մ ենթական ուղղականով է։ Եղնիկի երկում ենթակայի սեռականով կիրառությունը բացառություն է, և դա պետք է բացատրվի տվյալ դեպքում անցյալ դերբային առաջնակարգ նշանակություն տալու նպատակով։

Տեսանեմ ներգործական բայը գլխավոր նախադասության մեջ ստորոգյալ լինելով՝ առնում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, որ կապակցվում է գլխավորի հետ թէ, զի շաղկապներով. օրինակ՝ «Տեսանեմք՝ թէ թագաւորն զիւրոց օրինաց վրեժս պահանջէ» (60)։ «Տե՛ս, թէ բնաւ ամենեքին գտանիցի ի նմա յիշատակ ցանկութեանն» (61)։ Բայց բարդ նախադասության կազմում գտնվող խնդիր երկրորդական նախադասությունները միշտ վերլուծական ձևով հանդես չեն գալիս։ Հաճախ դրանք հանդես են գալիս գլխավոր նախադասության հետ համադրված։ Այս դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է անցյալ դերբայով, իսկ ենթական՝ հայցական հոլովով։ Դուրս է գալիս, որ երկրորդական նախադասության ենթական մի կողմից գլխավոր նախադասության ստորոգյալի ուղիղ խնդիրն է, մյուս կողմից՝ անցյալ դերբայի կողմնակի ենթական։ Իսկ անցյալ դերբայը, որ վերլուծական կառույցի մեջ ստորոգյալ էր, համադրական կառույցի մեջ դառնում է կողմնակի ստորոգելի, հայցականով կիրառված ուղիղ խնդրի համար։ Օրինակ՝ «Տեսանիցէք ընդ առաւօտս զերկինս կարմրացեալ» (186)[12]։ «Նախ զնոսա արարեալս տեսանիցէ» (233)։ «Գազանացն զկէսսն փախստականս եղեալս տեսանեմք» (157)։ Տեսանեմք զմեծատուս աղքատացեալս, և զաղքատս մեծացեալս» (161)։

Անցյալ դերբայը այս դեպքում ստանում է լրացական բառի դեր, ուստի և թվով, մեծ մասամբ, համաձայնում է իր լրացյալի հետ. «Նոյնպէս և զերկիր սեղմացեալ տեսանեմք» (40)։ «Զսատանայ ամպարշտացեալ տեսանիցեն» (55)։ «Նախ զնոսա արարեալս տեսանիցէ» (233)։

Եթե տեսանեմ բայը կրավորական (տեսանիմ) սեռով գործածվեր (այդպիսին Եղնիկը չունի), ապա այս դեպքում ենթական ուղղականով կլիներ. օրինակ՝ «Նա և ինքն իսկ մարդն առանձին յերկուս բաժանեալ տեսանի»[13], «Զի աներևոյթք նորա ի. սկզբանէ աշխարհի յարարածոցս իմացեալ տեսանին»[14]։

Եղնիկը տեսանիմ բայի փոխարեն ունի երևիմ չեզոք բայը։ Եթե տեսանիմ բայը նշանակությամբ մոտենում է լինիմ, երևիմ բայերին և պարզապես կրավորականի կազմության մեջ է գործածվում, ապա երևիմ բայը անցյալ դերբայի բաղադրությամբ նշանակում է դուրս է գալիս, որի ենթական անպայման ուղղականով է դրվում, ինչպես տեսնում ենք հետևյալ օրինակում. «Եւ եթէ ի պարզական բնութեանցն յօդեցաւ, ապա էր ժամանակ՝ յորժամ հիւղն իսկ չէր ի միջի, զի ի պարզականացն յոդելոյ եղև հիւղն. ուստի լեալ իսկ երևի հիւղն» (33)։ Բայց հետևյալ օրինակում Եղնիկը դարձյալ կարևորությունը տալիս է դերբային, և ենթական ուղղականի փոխարեն սեռականով է արտահայտվել, քերականական մի երևույթ, որ մյուս մատենագիրները չունեն. «Եւ իւր իսկ երբեմն իբրև զհինօրեայ, երբեմն իբրև զմատաղօրեայ, վասն այլ և այլ տեսչութեանց կերպարանեալ՝ ցանկանալոյ առնն երևէր» (95)։

---

11 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1914 թ., էջ 87, 153։

12 Նման կիրառություններում անցյալ դերբայը համատեղում է նաև վիճակի պարագայի պաշտոն (տե՛ս Վ. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 268—270)։

13 Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 31։

14 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 165։

Ասեմ բայը դառնալով գլխավոր նախադասության ստորոգյալը, հաճախ ունենում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, որի ստորոգյալն արտահայտվում է վերլուծական ժամանակով. օրինակ՝ «Անհնարին է ասել, թէ հիւղեայն լեալ իցէ» (32)։ «Զորոց ասեն՝ թէ ի չարէ արարչէ եղեալ են» (65)։ «Եթէ ասիցեն՝ եթէ կատարեալ էր» (117)։ Այսպիսի բարդ նախադասությունը կարող է կապակցվել նաև շարահարությամբ. օրինակ՝ «Որպէս ասեն՝ ի յերկուանալոյ անտի յղացաւ Արհմնն» (132)։ «Ասէ. զՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի» (165)։ «Ասեն, մեք իսկ աչօք տեսանեմք» (190)։ Նման բարդ նախադասությունները երբեմն արտահայտվում են դերբայական դարձվածով պարզ նախադասությամբ, որտեղ երկրորդական նախադասության ենթական վերածվում է խնդրի, իսկ ստորոգյալը արտահայտվում է անցյալ դերբայով։ Ահա Եզնիկի օրինակները. «Ուստի զարուեստն յոչնչէ ի մարդիկ պատշաճեալ ճարկ է ասել» (27)՝ հետևաբար պետք է ասել, որ արվեստը մարդուն հարմարեցված է ոչնչից։ Ինչպես տեսնում ենք, արդի հայերենը միայն բարդ նախադասությամբ կարող է արտահայտել այդ միտքը։ Կամ՝ «Զոր ասեն յԱստուծոյ եղեաւ ճիւղեայն» (31)։ «Յաղթեալ կասկածանօք ի մեծագունէ քան զնա ասիցեն» (32)։ «Եւ զայն ոչ եթէ առ եղեռանէ ինչ լեալ ասեմք մարդոյն» (41)։ «Զստանայէ ասեմք լեալ թշնամի մարդկան» (49)։ Վերջին նախադասության մեջ կողմնակի ենթական բացառականով է։ «Իբրև գծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն» (98)։ Այսպիսի նախադասություններ ուրիշ շատ հեղինակներ չունեն։ Ինչպես տեսնում ենք, Եզնիկն էլ քիչ է գործածել։ Հաճախ էլ անցյալ դերբայը դիմավոր բայի մոտ հանդես է գալիս իբրև ձևի պարագա, որ թարգմանվում է տվյալ անցյալ դերբայի գործիական հոլովով։ Որքան էլ անցյալ դերբայը ինքնուրույն է, չի խուսափում լինել նաև կախյալ հարաբերության մեջ։ Այտընյանը սահանջում է՝ կարճ նախադասությունների մեջ անցյալ դերբայը դիմավոր բայով արտահայտել, բայց օրինակ՝ «Միոյն յարուցեալ ի մերայ զմիւսն սպանանիցէ» (45)։ «Զի նախ յառաջնումն իսկ յետս ճարեալ վատթարիցէ զնա» (127)։ «Ապա յողոքս անկեալ աղաչէր զնա» (249)։ «Ելոքա նոցին եմանեալք՝ զնոյն անառակութիւնս անխտիր գործեսցեն» (123)։ «Եւ միւսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ համբոյր և ի քթինս» (69)։ Այս բոլոր դեպքերում անցյալ դերբայը գործիականով պետք է արտահայտել իբրև ձևի պարագա, և այդպես էլ թարգմանված են այդ նախադասությունները[15]։

Անցյալ դերբայով դերբայական դարձվածը գրաբարում գործածվել է որոշիչ երկրորդական նախադասության կազմում։ Օրինակ՝ «Այն իսկ մեծ և զարմանալի է, զի մարդն Աստուծոյ՝ վառեալ Աստուծոյ օգնականութեամբն, պատերազմեալ յաղթիցէ սատանայի» (56)։ Արդի հայերենով վառեալ Աստուծոյ օգնականութեամբն կարտահայտվի գինված աստծու օգնականությամբ կամ՝ աստծու օգնությամբ գինված մարդը։ Իսկ գրաբարում այդպիսի որոշիչը արտահայտվում է անցյալ դերբայով կապակցված դերբայական դարձվածով։ Բերենք մի քանի օրինակ. «Զիա՞րդ վնասակարքն արարեալք յԱրհմնեայ ի նորա երկրի բնակիցեն» (145)։ «Այլ երկինք և երկիր անօթք ետեղակալք են հաստատեալք յարարչեն» (159)։ «Զի մի՛ վաղն առնելով՝ լեալքն վնասիցեն, կարծեալ թէ մշտնջենակիցք նորա իցեն» (232)։ «Թէպէտ և այլք զաղօթից կարծեցին՝ ասացեալ ի աեառնէն» (108)։

Անցյալ դերբայը հաճախ հանդես է գալիս իբրև ենթակա՝ կատարելով անվան գործառություն։ Այդ է պատճառը, որ շատ անցյալ դերբայներ դադարել են բայ լինելուց և դարձել են այլևայլ կարգի բառեր։ Այդպիսի դերբայներ են՝ բարձրեալ, կատարեալ, առաքեալ, դարձեալ, ճեծեալ, ենչեցեալ, հանգուցեալ, օրհնեալ, կարօտեալ, կոչեցեալ, հաւատացեալ և այլն, որոնք ազատորեն իբրև ենթակա, խնդիր, որոշիչ, բացահայտիչ և այլ կարգի ան-

15 Տե՛ս Ա. Աբրահամյանի «Եղծ աղանդոցի» թարգմանությունը (Երևան, 1970, էջ 50, 92, 155, 90, 61)։

դամներ են դառնում։ Իսկ եթե իրենց նշանակությունը այս կամ այն չափով փոխում են, ապա այդ փոփոխությունը պայմանական է. դրանք փոփոխվում են տվյալ պահին և տվյալ գործածության մեջ, իսկ նախադասությունից դուրս մնում են իբրև դերբայներ։ Դարձեալ–ը որպես մակբայ, առանձին էլ, կիրառության մեջ էլ նշանակում է «կրկին», «ևս»։ Դարձեալ բայը անցյալ դերբայ է, որն ունի «ետ դառնալով» նշանակությունը։ Այժմ բերենք այլ օրինակներ այս օրինաչափության վերաբերյալ. «Եթէ ասիցեն՝ ...կատարեալն յումմէ՞ կարօտանայր խնդրել որդի» (117)։ «Այլ յանդիմանէ զնոսա նոյն Աստուծեալ» (291)։ «Հեծեալք իբրև զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն» (107)։

Միայն իբրև դերբայ գործածվածները և՛ եզակի, և՛ հոգնակի (հոգնակիացումը ինքնին գոյականացում է) ամենայն դյուրությամբ ենթակա են դառնում. «Նահատակեալքն կռուիցին և յաղթեցին նմա» (58)։ «Եւ գրեսցուք՝ եթէ բժշկեալքն էին ինչ նմա անկ վասն երախտեացն» (267)։ «Զի չեկն ի զղջումն յանցուցեալն» (74)։

Անցյալ դերբայը լինում է նաև որոշիչ և ցույց է տալիս գործողությամբ արտահայտվող հատկանիշ. հոսեալ ջուր, հոլովեալ վէմ, ծառայեալ որդի կապակցությունների մեջ հոսեալ, հոլովեալ, ծառայեալ արտահայտում են անցյալում կատարված գործողություն և դրանով էլ որոշում, հատկանշում են առարկան։

Անցյալ դերբայ որոշիչը ածական որոշիչից զանազանվում է։ Ամենից առաջ անցյալ դերբայը որոշիչ կարող է դառնալ՝ հանդես գալով իր մի շարք լրացումներով, այսինքն՝ այդ լրացումների հետ կազմում է դերբայական դարձված. օրինակ՝ «Սակայն և նա (արեգակն—Թ. Շ.) կատարէ զզատուցեալ նմա զշարժումն» (40)։ «Եւ զթաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արեւու ցուցանեն» (19)։ Անցյալ դերբայ որոշչի և ածական որոշչի մյուս տարբերությունն այն է, որ անցյալ դերբայը որոշչի դերում համարյա առանց բացառության և՛ նախադաս, և՛ ետադաս գործածությամբ թվով ու հոլովով համաձայնում է իր որոշյալին։ Իսկ նախադաս դիրքով ածական որոշիչը շատ քիչ է համաձայնում։ Երրորդ զանազանությունը այն է, որ անցյալ դերբայն իր լրացումներով կարող է հեռանալ իր որոշյալից. «(Զհրամայէ) և ոչ զնաւ ի ձուոց կամ ի ձագուց վերայ նստեալ՝ ի միասին միանգամայն առնուլ» (277)։ «Եւ իշավայրաց քինացելոց՝ զարու յաւանակս ի մատաղութեան կտրելոյ» (175)։ «Զի առաւելութիւն բարերարութեան նորա յայտնի լիցի մարդկան, վասն թողութեան տալոյ մարդկան յառաջագոյն գործելոցն մեղաց» (55)։ «Եւ արդ եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է, զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց գրոց յանդիմանել, և զկարծեալսն ներքինս և ոչ ճշմարտեալս՝ գրովք սրբովք յանդիմանել» (111)։ Ինչպես տեսնում ենք վերջին օրինակից, որոշիչը իր որոշյալին համաձայնել է թվով և հոլովով։

Վ. Ջալբխյանը գրում է. «Երբ անցեալն հետը խնդիր կամ ուրիշ յարակից բառեր ունի, գոյականը յառաջ կը դրուի։ «Զաւակք օրհնեալք յԱստուծոյ. Վարդենի բուսեալ ի գնացս ջուր։ Շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ։ Աղիւս յարևու չորացեալք»։ Սրանց հաջորդող տողերում Ջալբխյանը բերում է օրինակներ, որտեղ անցյալ դերբայը իր լրացումների հետ իբրև որոշիչ նախադաս է, և նա կարծում է, որ դա դասական գրաբարին հատուկ չէ։ Օրինակ՝ «Զգերեզմանս կրկտեն, և զթաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արեւու ցուցանեն» (Եզնիկ, էջ 19) և այլն[16]։ Ջալբխյանի բերած օրինակները և՛ ինքնուրույն են, և՛ թարգմանական գրականությունից բերված։

Այժմ Եզնիկի երկում գործածված օրինակների միջոցով պարզենք շարադասական այս խնդիրը։ Ինչպես երևում է, անցյալ դերբայ որոշչի շարադասությունը ոչ թե կապված է անցյալ դերբայի կողմնակի անդամների, այլ

---

16 Վ. Ջալբխեան, Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 427։

ետադաս որոշյալի այնպեսի լրացումների հետ. որոնք տրոհված են։ Օրինակ՝ «Տայր ընդ նախընծայեցելոյ առն Աստուծոյ ընդ Սովսեսի խօսել» (94)։ Այստեղ առն որոշյալը պետք է ետադաս լիներ, որպեսզի կապակցվեր իր բացահայտչի հետ (Մովսէսի)։

Մյուս օրինաչափությունն այն է, որ նախադաս որոշյալին անմիջապես պետք է հարեն նախադաս այնպիսի բառեր, նախադրություններ կամ իրրև այդպիսիք գործածվող բառեր, որոնք պահանջում են, որ իրենց խնդիրը իրենց մոտ լինի. օրինակ՝ «Այլ նա աւասիկ իբրեւ զկաոս իմն լծեալ ի չորից երիցվարաց զաշխարհս տեսանեմք» (17)։ «Որ իշանէ իբրև զգուր ծորեալ» (213)։ Երբ անցյալ դերբայով արտահայտված որոշիչը կամ հատկացուցիչը նախադաս լրացումներ են ունենում, դերբայը անմիջապես հաջորդում է լրացմանը։ Օրինակ. «Եւ դարձեալ տանջանս և պատիժս շնչոցն յանցուցելոց դնեն» (210)։ «Զի մարմինն և նոցա ի չորից հիւթոցն կայ. և ոգին ոչ ի չորից հիւթոց յօդելոց» (211)։

Մնացած դեպքերում շարադասությունը ազատ է, և Եզնիկը, ըստ իր սովորության, որոշիչն ավելի հաճախ նախադաս է դնում. օրինակ՝ «Կայ հաստատեալ և ոչ շարժի ի սահմանելոյ նմա տեղւոյն» (40)։ «Վրիպել չէ հնար ի սահմանելոյ հրամանէն» (161)։

Հետևյալ օրինակներում, չնայած նախընտրելի էր անցյալ դերբայի ետադաս գործածությունը, բայց Եզնիկը նախադաս է գործածել. «Եւ այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զրանագտանաց, և բաշաղանք մոլորելոց մտաց ի դիւաց» (99)։ Փոխանակ՝ բաշաղանք մտաց մոլորելոց ի դիւաց։ Բայց և կան կաղապարային կառույցներ. անօթս կազմեալս, ամանոցն կազմելոց. անօթ կազմեալ (167, 167, 168)։

Անցյալ դերբայը դառնում է նաև հատկացուցիչ, որը անցյալ ժամանակով բնութագրվող գործողության անուն է։ Օրինակ՝ «Ինքն է ամենայն բնութեանց արարիչ. և ոչ միայն կերպարանաց կազմիչ... այլ գոյանալոյ զոյացելոցն գոյարար» (239)։ «Հանցուք զնայաչաց իւրոցն խաբեցելոց» (241)։ «Նշանք հաւատացելոց այս են» (89)։ Անցյալ դերբայը երբեմն հատկացուցիչ է դառնում և իր հատկացյալի իմաստն էլ արտահայտում է հոդով. օրինակ՝ «Արժանի արար զմին պատմիչ առնել այլոց իրաց, և զայլսն մնացելոցն ի նմանէ» (198)։ Առհասարակ հատկացուցիչը հազվադեպ է նախադաս կիրառվում, բայց Եզնիկը անցյալ դերբայով հատկացուցիչ ունի նաև նախադաս դիրքում. «Եւ կոոց և դրոշելոց հանգամանք՝ առ Թարայիւ հարբ Աբրահամու» (206)։

Անցյալ դերբայը կարող է դառնալ նաև ուղիղ խնդիր, որ ցույց է տալիս գործողության արդյունք հանդիսացող առարկա, որի վրա է անցնում ստորոգյալի արտահայտած գործողությունը. «Զի՞ ետ ի ձեռս զիւր պատրեալսն նմա չարչարել» (258)։ «Զհիւանդս բժշկեաց, և զբորոտս սրբեաց, զմեռեալս յարոյց, զանդամալոյծս հաստատեաց» (267)։

Անցյալ դերբայը դառնում է նաև բացահայտիչ, օրինակ՝ «Այլ յորժամ նախ զնոսա արարեալս տեսանիցէ» (233)։ «Նախ զչորս հիւթսն մեկնեալս արարեալ» (220)։

Անցյալ դերբայը հանդես է եկել որպես անուղղակի խնդիր.

ա) Ներգործական բայերի տրականով անուղղակի խնդիր. «Այլ ճշմարտից հաւատացելոց ոչ սատանայ փորձութեամբքն կարէ ստնանել» (89)։

բ) Տրական հոլովով ներգործող խնդիր. «Եւ ի վախճանի հրէութեան, քրիստոնէութեան անուն ի Քրիստոսէ. որ նախ յԱնտիոք անուանեցաւ աշակերտելոցն» (208)։

գ) Մատուցման անուղղակի խնդիր տրական հոլովով. օրինակ՝ «Ըստ պէսպէս հիւանդութեանց՝ ազգի ազգի դեղս ախտացելոցն մատուցանել» (233)։

դ) Շահի անուղղակի խնդիր. «Եւ հինգամեայ լռութիւնն, զոր նոր յաշակերտութիւն եկելոցն սահմանեաց...» (223)։

ե) Յ նախդրով ունենք հաղորդման անուղղակի խնդիր. «Եւ մեղմով և աղերսալից բարբառով ասէր ցյանցուցեալն՝ ո՞ւր ես Ադամ» (73)։

զ) Առ նախդրով և հայցական հոլովով անցյալ դերբայը գործածվել է իբրև հանգման անուղղակի խնդիր. «Նոյնպէս և առ ցասուցեալն և տրտմեալն և առ նախանձոտն քաղցրութեամբ ոք մատչի և ցածուցանէ» (62)։

է) Վասն նախադրության հետ անցյալ դերբայը գործածվում է իբրև շահի անուղղակի խնդիր. «Եթէ մեռեալք ոչ յառնեն, զի՞նչ գործիցեն այնոքիկ որ վասն մեռելոց մկրտեցան» (293)։

ը) Ըստ նախդրով և տրական հոլովով անցյալ դերբայը դառնում է հիմունքի պարագա. օրինակ՝ «Այսմ հողմ է, և հողմն՝ ոգի, ըստ յառաջագոյնն ասացելոյ» (92)։

Անցյալ դերբայը գործածվում է նաև իբրև ձևի պարագա. «Եւ եթէ կացեալ միտ դնիցես, անդէն անդէն մթացեալ անօթն լուսաւորի առ սակաւ սակաւ» (218)։ Այդ նույն պաշտոնը անցյալ դերբայը կատարում է նաև իբրև նախադրության հարադրությամբ. «Եւ մերթ երթայ ղօղէ իբրեւ զարճուրեալ» (15)։

Անցյալ դերբայը Եզնիկը գործածել է նաև իբրև կոչական. «Ո՜ անմիտք և մոլորեալք» (290), որպես կրավորական բայերի ուղղական հոլովով վերադիր. «Քանզի սատանայ յԵբբայեցւոց և Ասորւոց լեզու է խոսարեալ թարգմանի» (52)։

Ինչպես հայտնի է, գրաբարում շատ բայեր, մանավանդ կրավորական սեռի բայերը, ենթակայական դերբայ չունեն, և որոշ բայերի ենթակայականի իմաստն արտահայտվում է անցյալ դերբայով։ Այս մասին Չալըխյանը գրում է. «Ընդունելության ներկա չունեցող բայերուն... շատ անգամ անցյալը կը գործածուի անոր տեղ։ Այսպես կ'ըսվի յուսուցեալ, փախուցեալ, մարտուցեալ, գնացեալ, կացեալ, նստեալ, աշխատեալ, ջանացեալ և այլն»[17]։ Սրանք, ըստ Չալըխյանի, նշանակում են՝ յուսացող, մարտնչող, գնացող, մնացող, փախչող, նստող, աշխատող, ջանացող։ Այսպիսի կիրառության համար Եզնիկը ունի մի օրինակ, որը կասկածի տեղ չի թողնում անցյալ դերբայի՝ իբրև ենթակայական դերբայ գործածվելու համար։ Այսպես՝ «Վառէ գեղեցիկ զմարդիկ՝ առ ի պսակելոյ զյաղթողն, և յամօթ առնելոյ զվաստացեալն» (58)։ Զվաստացեալն այստեղ հակադրված է զյաղթողն ներկա դերբային։ Իսկ զվաստացեալն նշանակում է ծուլացողին։ Ահա այլ օրինակ ևս։ «Եւ ի վախճանի հրէութեան, քրիստոնէութեան անուն ի Քրիստոսէ. որ նախ յԱնտիոք անուանեցաւ աշակերտելոցն» (208)։ Աշակերտելոց այստեղ նշանակում է աշակերտողներին։ Այս գործածությամբ Եզնիկը առանձնապես աչքի չի ընկնում, սակայն, ինչպես տեսնում ենք, նա էլ անցյալ դերբայը գործածել է ենթակայական դերբայի իմաստով, հատկապես կրավորական սեռի համար։

Գրաբարում անցյալ դերբայը օժանդակ բայի հետ կազմում է բաղադրյալ ժամանակներ։

Անցյալ դերբայը հանդես է գալիս նաև դերբայական դարձվածի կազմում՝ ձևավորելով նախադասության տարբեր անդամներ։ Եզնիկը ունի նման կիրառության բազմաթիվ օրինակներ։ Նշենք դրանք.

ա) որոշիչ՝ «Եւ այլք զգերեզմանս կրկտեն, և զքաղեալ մարմինս ընդ ճողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արևու ցուցանեն» (19)։

բ) Բացահայտիչ՝ «Նոքա ճոցին նմաճեալք՝ զնոյն անառակութիւնս անխտիր գործեսցեն» (123)։

գ) Ուղիղ խնդիր՝ «Զոր ասեն յԱստուծոյ եղեալ հիւղեայն» (31)։

դ) Համեմատության խնդիր. «Այլ նա աւասիկ իբրև զկաոս իմն լծեալ ի շորից երիվարաց զաշխարհս տեսանեմք» (17)։

---

17 Նույն տեղում, էջ 420։

ե) Զևի պարագա՝ «Որով ցուցանի՝ թէ մարմինք նորոգեալ յարութեամբն. սազատացեալ յամենայն կարեաց՝ յառնեն» (296)։ Զևի պարագայի մի տեսակն է վիճակի պարագան, որ ցույց է տալիս առարկայի հետ կապված գործողության վիճակը. «Թէ ճշմարտիւ որ քննիցէ զիրսն՝ գտանէ յաճենարին վտանգս եկեալ զհիւղն» (31)։

զ) Հիմունքի պարագա՝ «Այսն հողմ է և հողմն՝ ոգի ըստ առաջագոյնն ասացելոյ» (92)։

Այսպիսով, տեսնում ենք, որ Եզնիկը իր երկում բավականաչափ շատ դերբայական դարձվածներ է գործածել, որոնք կյանքի են կոչվել ոճական նկատառումներով, այսինքն՝ այս կամ այն իմաստային նրբերանգները արտահայտելու համար։

Եզնիկ Կողբացու երկում գործածված անցյալ դերբայի քննությունից պարզվում է, որ այն գրաբարում տեսակարար մեծ կշիռ է ունեցել ու խաղացել գործուն դեր՝ իմաստաբանական և շարահյուսական առումներով։

СИНТАКСИЧЕСКИЕ ФУНКЦИИ ПРИЧАСТИЯ ПРОШЕДШЕГО ВРЕМЕНИ В КЛАССИЧЕСКОМ ГРАБАРЕ

(на материале языка Езника Кохбаци)

Т. С. ШАХВЕРДЯН

Резюме

Причастие прошедшего времени превосходит остальные (кроме инфинитива) не только частотностью употребления, но и разнообразием синтаксического употребления. В грабаре оно часто функционировало в роли личного глагола.

Сказуемое, выраженное причастием прошедшего времени, могло выступать в составе и главного, и придаточного предложения. Оно становится независимым сказуемым, когда в предложении такое причастие и личный глагол имеют разные подлежащие.

Подлежащее при сказуемом, выраженном причастием прошедшего времени, может иметь форму именительного или родительного падежей. В произведении Езника встречаются подлежащие и в именительном, и в родительном падежах. Если личный глагол стоит перед причастием прошедшего времени, то подлежащее ставится в именительном падеже. Это свидетельствует о важном значении порядка слов: ранее возникшая в мысли форма становится доминирующей. Подлежащее в родительном падеже говорит о том, что автор считает более важной безличную форму, а в именительном—о том, что внимание сосредоточено на личной форме глагола.

Причастие прошедшего времени с вспомогательным глаголом образует давнопрошедшее—результативно настоящее (*տեսեալ եմ*), давнопрошедшее—результативное прошедшее (*տեսեալ էի*) и аналитическое будущее сослагательного наклонения (*տեսեալ իցեմ*).

Причастие прошедшего времени с глаголами *լինիմ, կամ, ունիմ, գտանեմ, երևիմ, տեսանեմ* образует аналитические времена. Рассматриваемые причастия иногда употребляются в значении субъектного причастия. Известно, что в грабаре от многих глаголов субъектное причастие не образовывалось. Этот дефицит восполнялся за счет причастия прошедшего времени, которое характеризуется активной способностью образовывать причастный оборот в самых разных функциях.

THE SYNTACTICAL FUNCTIONS OF THE PAST PARTICIPLE IN CLASSIC GRABAR

(On the material of the language of Yeznik Koghbatsi)

SHAHVERDIAN T. S.

S u m m a r y

The past participle excels the rest (except the infinitive) not only in frequency of use but also in diversity of syntactical functions. In Grabar it often functioned in the role of a personal form of verb.

The predicate verb, expressed by the past participle, could serve in both the main and the subordinate clauses. It becomes an independent predicate verb when such a participle in a sentence and a personal form of the verb have different subjects.

The subject of a predicate verb, expressed by a past participle, can be in the nominative case or genitive case. Yeznik's works contain subjects in both nominative and genitive cases. If the personal form of the verb is located before the past participle then the subject is in the nominative case. That is an indication regarding the important significance of the order of words—a form originating early in the thought becomes dominating. The subject in the genitive case indicates that the author considers the impersonal form more important and the one in nominative case indicates that attention is concentrated on the personal form of the verb.

The past participle with an auxiliary verb forms a past—resultative (present perfect—I have seen), a further past—resultative past (past perfect—I had seen), and an analytical subjunctive future (I should have seen),

The past participle builds analytical tenses with to be, to live, to have, to find, to seem and to see. The examined participles are sometimes used in the sense of subjective participles. It is known that many verbs did not build subjective participles in Grabar. That deficiency was filled up by the past participle, which possesses a vivid aptitude of forming participle constructions for quite different functions.